

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10**

2013թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ ՀՄՖ 2012-2013 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքների և զարգացման հայեցակարգային դրույթների իրականացման հաշվետվություն:

/զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Գ.Ղաջոյան/

2.ԳՊՀ ՏՖ 2012-2013 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքների և զարգացման հայեցակարգային դրույթների իրականացման հաշվետվություն:

/զեկ՝ ՏՖ դեկան Ս.Գ.Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ. Ղաջոյանը ներկայացրեց 2012-2013 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Նա մանրամասնորեն ներկայացրեց և վերլուծեց ամբողջ գործընթացը: Ամփոփիչ ատեստավորումը չորս տարվա ընթացքում կատարած աշխատանքների, յուրացրած գիտելիքների ցուցադրումն է, վերջնարդյունքի բացահայտումը: Այս տեսակետից, ըստ զեկուցողի, ուսուցման դրվածքը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում բարձր հիմքերի վրա է գտնվում: Իհարկե, լինում են առանձին դեպքեր, երբ ուսանողը թերանում է նույնիսկ վերջին պահին, սակայն դրանք չեն ազդում ընդհանուր արդյունքի վրա: Զեկուցողը ներկայացրեց համապատասխան թվական տվյալներ ըստ բաժինների: Ինչ վերաբերում է ֆակուլտետի զարգացմանը, Հ.Ղաջոյանը նշեց, որ ծրագրային դրույթները իրագործվում են, հաղթահարվում են դժվարությունները, վերացվում են թերությունները:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման արդյունքները ներկայացրեց ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Վերջինս ևս մանրամասնորեն ներկայացրեց գործընթացն ըստ առանձին բաժինների:Անդրադարձավ ֆակուլտետում տարվող աշխատանքներին,որոնք նպատակ են հետապնդում կրթության որակի,

ուսուցման արդյունավետության բարձրացման: Նշվեց, որ կան նաև թերություններ, որոնց վերացման ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին համալսարանի առօրյա աշխատանքներին: Նշվեց, որ գիտխորհրդին է դիմել ընդհանուր գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ն.Ղազարյանը՝ իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու խնդրանքով: Որոշվեց կազմակերպել փակ /գաղտնի/ քվեարկություն: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով: Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով զեկուցումները և քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

1.Հ. Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Ս.Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Ն.Ղազարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և գիտխորհրդի որոշումը ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան